

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի

24.05.2019թ. նիստի

Օրակարգ

1. 2018-2019 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
2. Ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահի հաղորդումը:
3. 2018-2019 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություն հաշվետվություն /Ա. Առաքելյան, Յու. Գաբրիելյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 26-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Նախքան սոց. հարցման արդյունքները ներկայացնելը՝ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը, կարևորելով նախկին դեկան Ս. Աբրահամյանի կատարած աշխատանքը, նշեց, որ Ս. Աբրահամյանի աշխատանքի արդյունքները դրական են եղել և ֆակուլտետը չի կարող չգնահատել դա: Այնուհետև դեկանը ներկայացրեց փոխդեկաններ Լ. Կարապետյանին և Գ. Գրիգորյանին և վստահեցրեց, որ միացյալ ուժերով պետք է հաղթահարել բոլոր դժվարությունները՝ առաջնահերթ համարելով ֆակուլտետի խնդիրների լուծումը: Դեկանը նաև խնդրեց ամբիոնների վարիչներին հնգօրյա ժամկետում ներկայացնել ֆակուլտետի գիտխորհրդի անդամների ցանկը՝ հատկապես ուշադրություն դարձնելով գիտական աստիճանին: Դեկանը սոց. հարցման արդյունքները ընդհանուր առմամբ համարեց դրական և հորդորեց ամբիոնների վարիչներին կոնկրետ դեպքերում ուշադրություն դարձնել և քննարկել ոչ միայն 4-ից ցածր միավորները, այլև ուսանողների կողմից գրված կարծիքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ուսխորհրդի նախագահ Ա. Ղազարյանը նշեց, որ ուսանողները որոշ չափով թերահավատ են վերաբերվում սոց. հարցման արդյունքների արդյունավետությանը, և սա է պատճառը, որ սոց. հարցման մասնակցության ցուցանիշները ցածր են: Դեկանը ավելացրեց, որ ամեն ինչ պետք է անել, որպեսզի շտկվեն մասնակցության հետ կապված խնդիրները՝ նվազագույնը 30 տոկոս մասնակցություն ապահովելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Սոց. հարցման արդյունքներն ընդհանուր առմամբ գնահատել լավ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ Ա. Ղազարյանը ներկայացնելով ուսխորհրդի կատարած աշխատանքները, նշեց, որ անցկացվել են տարատեսակ միջոցառումներ, խաղ-մրցույթներ, իրականացվել գիտակրթական ծրագրեր հրավիրված մասնագետների մասնակցությամբ, փոփոխություններ են կատարվել ուսխորհրդի կազմում, այսինքն, ավարտող ուսանողներին փոխարինել են նորերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատել 2018-2019 ուս. տարում ֆակուլտետի ուսխորհրդի կատարած աշխատանքները:

3. ԼՍԵՑԻՆ՝

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Առաքելյանը, ներկայացնելով հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի կատարած աշխատանքները, նշեց, որ ամբիոնում պատշաճ ուշադրություն է դարձվում գիտական և մեթոդական աշխատանքներին: Ամբիոնի մասնագետները պարբերաբար մասնակցում են տեղական և արտերկրյա գիտաժողովներին, տպագրում հոդվածներ: Թարմացվել են ուսումնական ծրագրերը:

Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը զեկուցեց, որ ամբիոնում կրկին առկա է ուսանողների քանակի նվազում, որը պայմանավորված է որոշակի օբյեկտիվ հանգամանքներով: Ամբիոնի անձնակազմը, այդուհանդերձ, փորձում է առավել ճկուն և բազմակողմանի աշխատանքով հնարավորինս շտկել իրավիճակը: Ներդրվում են դասավանդման նոր մեթոդներ, կատարվում է անհատական աշխատանք ուսանողների հետ և խրախուսվում են նրանց առաջարկությունները: Պարբերաբար հրավիրվում են օտարերկրյա մասնագետներ, ամբիոնի անձնակազմը մասնակցում է տարբեր սեմինարների ու դասընթացների: Բաժնի 7-10 ուսանողներ ամեն տարի ստանում են ամառային կրթաթոշակ: Առանձին ուշադրություն է դարձվում դասավանդման գործընթացին, ուսանողական պրակտիկային, ուսանողներին աշխատանքի տեղավորելու նպատակով անմիջական կապեր են հաստատվում կոնկրետ հաստատությունների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2018-2019 ուս տարում Արտասահմանյան գրականության և Գերմանական բանասիրության ամբիոնների կատարած աշխատանքները գնահատել դրական:

4. ԸՆԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ՝

Որոշեցին՝

- Ատեստավորել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի հետևյալ ասպիրանտներին. Համլետ Առաքելյան, Ռիմա Ազատյան, Սելեդե Շամս Գոլոռխին, Ամալյա Սողոմոնյանին:
- Տպագրության երաշխավորել Ս. Գասպարյանի, Շ. Պարոնյանի և Գ. Մուրադյանի *The Use and Abuse of Language in the Legal Domain* մենագրությունը:
- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Գոհար Մադոյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
- Երաշխավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Զարուհի Առաքելյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
- Հաստատել Արտասահմանյան ամբիոնի ասպիրանտ Կատյա Թովմասյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ *Հակամշակութային դիսկուրսը Այրվին Ուելշի և Չակ Պալանիկի վեպերում* և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոց. Հ. Էդոյանին:
- Հաստատել Արտասահմանյան ամբիոնի ասպիրանտ Անահիտ Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ *Ֆիլիպ Լարկինը և 1950-80 թթ. անգլիական պոեզիայի զարգացման միտումները* և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Ն. Գոնչար-Խանջանին:
- Հաստատել Էլյա Դավթյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Հանդուրժողականություն արտահայտող շարահյուսական-ռճական միջոցները անգլալեզու քաղաքական խոսույթում (հայերենի և ֆրանսերենի զուգադրությամբ)» և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Լ. Ֆլջյանին:
- Հաստատել Անուշ Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Դիվանագիտական խոսքի եղանակավորումը անգլալեզու հակահաբեկչական փաստաթղթերում» և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Լ. Ֆլջյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար՝
24 մայիսի 2019 թ.

Գ. Մուրադյան